

Արարատքանի ԲԲԸ-ն հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր աշխատատեղերի համար՝

Պաշտոնը՝ Հաշվեգործառնական բաժին, Հաշվապահ-գանձապահ

Աշխատանքի անցնելու ամսաթիվ՝ անմիջապես

Ժամկետը՝ անորոշ ժամկետով, 3 ամսյա փորձաշրջանով

Վայրը՝ ք. Երևան և մարզեր

Աշխատաժամանակը՝ լրիվ դրույք

Աշխատանքի նկարագիրը Բանկի հաճախորդների հաշվեգործառնական սպասարկման իրականացում և բանկային ծառայությունների վաճառք

1. Աշխատանքային պարտականությունները

- Իրականացնել դրամային և արտարժույթային հաշիվների բացման և սպասարկման, ավանդների ընդունման, վարկային հաշիվների վարման, քաղվածքների տրամադրման, դրամային և արտարժույթային փոխանցումների իրականացման, կանխիկացման և այլ հաշվեգործառնական գործառնություններ:

- Խաչաձև վաճառքների միջոցով նպաստել բանկային ծառայությունների վաճառքի ծավալի աճին:

- Ապահովել Բաժնի կողմից կատարված գործարքների փաստաթղթային ձևակերպումների համապատասխանությունը՝ ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերին:

- Կատարել Մասնաձյուղի կառավարիչի և Բաժնի պետի հանձնարարականներ, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ խնդիրներ և պարտականություններ:

Անմիջական ղեկավարը՝ Հաշվեգործառնական բաժնի պետ, ավագ հաշվապահը

2. Ներկայացվող պահանջները.

- Բարձրագույն կրթություն
- Ֆինանսաբանկային ոլորտում նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ
- Բանկային համակարգը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի բավարար իմացություն
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office, Outlook, AS Bank

Այս աշխատանքային նկարագիրը ներառում է, սակայն չի սահմանափակվում վերոնշյալ պարտականություններով, և աշխատողը հնարավոր է ստանձնի աշխատանքային անհրաժեշտությունից բխող այլ պարտականություններ:

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրական (CV) լրացնել հետևյալ էլ. հասցեով՝ նշելով համապատասխան պաշտոնի անվանումը.

<https://www.araratbank.am/careers/apply.html>:

Հայտարարության վերջնաժամկետը՝ 14.04.2017թ

Պաշտոնը՝ Վարկային մասնագետ (Միկրովարկավորման և փոքր բիզնեսի վարկավորման բաժին)

Աշխատանքի անցնելու ամսաթիվ՝ անմիջապես

Ժամկետը՝ անորոշ ժամկետով, 3 ամսյա փորձաշրջանով

Վայր՝ Գլխամաս կամ մասնաճյուղեր

Աշխատաժամանակը՝ լրիվ դրույք

Աշխատանքի նկարագիրը՝

Մարքեթինգի իրականացում՝ պոտենցիալ վարկառուներ ներգրավելու նպատակով, վարկառուների պատշաճ սպասարկում, վարկառուի ֆինանսական վիճակի վերլուծության իրականացում, համապատասխան եզրակացության պատրաստում, վարկի տրամադրում և սպասարկում, մոնիտորինգի իրականացում, տեղաբաշխված վարկերի վերահսկում և կառավարում:

Աշխատանքային պարտականությունները՝

1. Մարքեթինգի իրականացում՝ պոտենցիալ վարկառուներ ներգրավելու նպատակով:
2. Վարկառուի գործունեության վերլուծություն և վարկունակության գնահատում, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան եզրակացության պատրաստում, վարկի տրամադրում և սպասարկում:
3. Այց նոտարական գրասենյակ և կադաստր,
4. Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան մոնիտորինգի իրականացում:
5. Իրականացնում է Բանկի միկրովարկավորման արդյունավետ քաղաքականության կիրառման, օպտիմալ վարկային պորտֆելի ձևավորման, ժամկետանց վարկերի վերահսկման և կառավարման, համապատասխան հաշվետվությունների կազմման աշխատանքներ:

6. Իրականացնում է վարկավորման շուկաների ուսումնասիրություններ և ներկայացնում է առաջարկներ նոր վարկառուների ներգրավման, վարկային նոր գործիքների կիրառման, դրանց տոկոսադրույքների և սակագների վերանայման վերաբերյալ:

7. Պոտենցիալ վարկառուներին մասնագիտական խորհրդատվության տրամադրում:

8. Ծրագրային ցուցանիշների ապահովում:

9. Կատարում է Միկրովարկավորման և փոքր բիզնեսի վարկավորման բաժնի պետի, բաժնի պետի տեղակալի և տարածաշրջանային պատասխանատուի այլ հանձնարարականներ:

Անմիջական ղեկավարը՝

Տարածաշրջանային պատասխանատու

Պատասխանատվությունը՝

Վարկային մասնագետը պատասխանատվություն է կրում Բանկի իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև իր առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Կրթությունը՝

Բարձրագույն կրթություն(տնտեսագիտական կամ տեխնիկական):

Մասնագիտական փորձը՝

Ֆինանսաբանկային ոլորտի աշխատանքային փորձ կոլիտվի որպես առավելություն:

Պահանջվող գիտելիքները՝

- Բանկային գործ, ֆինանսներ, տնտեսագիտություն, մաթեմատիկա, կառավարում:
- Բանկային համակարգը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի անհրաժեշտ իմացություն:
- Հայերեն, օտար լեզուների իմացությունը ցանկալի է:

Անհրաժեշտ հմտություններ և ունակություններ

- Թիմային աշխատանք,
- Որոշումների կայացում,
- Խնդիրների լուծում,
- Բանկացություններ և հաղորդակցություն,
- Հաշվետվությունների մշակում և ներկայացում,
- Միջանձնային հարաբերություններ, կոնֆլիկտների կառավարում,
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և օգտագործում, անալիտիկ մտածելակերպ,

- Համակարգչի իմացություն:
- Արագ կողմնորոշվելու ունակություն:

Այս աշխատանքային նկարագիրը ներառում է, սակայն չի սահմանափակվում վերոնշյալ պարտականություններով, և աշխատողը հնարավոր է ստանձնի աշխատանքային անհրաժեշտությունից բխող այլ պարտականություններ:

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրական (CV) լրացնել հետևյալ էլ. հասցեով՝ նշելով համապատասխան պաշտոնի անվանումը.

<https://www.araratbank.am/careers/apply.html>

Հայտարարության վերջնաժամկետը՝ 20.04.2017թ

Մանրամասն տեղեկությունների համար այցելեք **www.araratbank.am**: